

Բնագիր 9 (Տաւնականեան տարբերակ)

Ի ՅԻՇԱՏԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒՅ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԵՍՐՈՎԲԱՅ ՉՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ ԿՈՐԵԱՆ

1 Չասքանազեան ազգին եւ գճայաստան աշխարհիս գաստուածատուր շնորհս զգրոյն գիւտ, եւ զվարդապետութեանն պարգեւ ի Տեառնէ տուեալ, թէ յորում ժամանակի եւ որպիսի արամբ լուսաւոր վարդապետութեամբ, պատմեսցուք ձեզ, եւ զնորին հրեշտակակրան վարս առաքինութեան:

2 Էր այրս այս Մեսրոպք, ի Տարան գաւառէ, ի Յացեկաց գեղջէ, որդի Վարդանայ. ի մանկութեան աստիսս վարժեալ Յեղդենացոց դպրութեամբն, եւ եկեալ ի դուռն Արշակունեաց թագաւորացն Յայոց, կացեալ յարքունական դիւանին, լինէր սպասաւոր արքայատուր հրամանին: 3 Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց՝ ի զինուարական կարգս եւ յառաջադէմ, եւ սիրելի էր ամենեցուն՝ մեծամեծաց եւ փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն:

4 Յետ այտորիկ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յինքենէ զամենայն զբաղմունս, եւ առեալ զխաչն պարծանաց՝ ըստ աւետարանական հրամանին՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն Զրիստոսի: 5 Եւ հաճեալ զհրամանաց պայման, ի խաչակիր գունդն Զրիստոսի աշակերտացն խառնի. եւ զկրանս միանձանց յանձն առեալ յաւետ կրանաւորեր: 6 Եւ բազում եւ ազգի ազգի վշտակցութիւն ըստ Աւետարանին կրէր. եւ ամենայն կրթութեան հոգեւորացն գանձն տուեալ՝ կրանաւորեր ի քաղց եւ ի ծարաւ, ի ցուրտ եւ ի մերկութիւն. խոտաբուտ եղեալ, խարազնազգեստ եւ գետնատարած անկողնութ, եւ զհանգիստ քնոյ գիշերոյ յոտնաւոր տքնութեամբ ի թաւթափել ական վճարէր բազում անգամ: 7 Եւ զայս առնէր ոչ սակաւ ժամանակս: 8 Եւ գտեալ զոմանս զգաստասէրս յինքն յարեցուցանէր, աշակերտել նմին աւետարանական կրանաւորութեանն:

9 Եւ ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամական քաջութեամբ տարեալ. եւ Նովիմբ լուսաւորեալ եւ պայծառացեալ ի հանդէս ճգնաւորական հաճոյ Աստուծոյ եւ մարդկան երեւեալ:

10 Առեալ այնուհետեւ երանելոյն զաշակերտեալսն իւր՝ երթայր ի Գողթն. որում ընդ առաջ լինէր իշխանն Շամբիթ, եւ սիրով ընդունէր որպէս զծառայ Աստուծոյ բարձրելոյ. եւ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ ա-